

ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովի 1995 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 2869/95 կանոնակարգ (ԵՀ)

Ներքին շուկայում (ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ)
համապատասխանեցման գրասենյակին վճարման ենթակա տուրքերի մասին

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով թիվ 3288/94 կանոնակարգով (ԵՀ)¹ փոփոխված Խորհրդի «Համայնքի
ապրանքային նշանի մասին» 1993 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 40/94
կանոնակարգը (ԵՀ)² և, մասնավորապես, դրա 139-րդ հոդվածը,

հաշվի առնելով Խորհրդի «Համայնքի ապրանքային նշանի մասին» թիվ 40/94
կանոնակարգը (ԵՀ) կիրարկող՝ Հանձնաժողովի 1995 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ
2868/95 կանոնակարգը (ԵՀ)³,

քանի որ թիվ 40/94 կանոնակարգի (ԵՀ) (այսուհետ՝ Կանոնակարգ) հոդված 139«3»-ով
նախատեսվում է, որ տուրքերի մասին կանոնակարգերը պետք է ընդունվեն
Կանոնակարգի 141-րդ հոդվածով սահմանված կարգով,

քանի որ Կանոնակարգի հոդված 139 «1»-ով նախատեսվում է, որ տուրքերի մասին
կանոնակարգերը պետք է, մասնավորապես, սահմանեն տուրքերի չափը և դրանց
վճարման եղանակները,

քանի որ Կանոնակարգի հոդված 139 «2»-ով նախատեսվում է, որ տուրքերի չափը
պետք է հաստատվի այնպիսի մակարդակով, որը Ներքին շուկայում (ապրանքային
նշաններ և արդյունաբերական նմուշներ) համապատասխանեցման գրասենյակի
(Գրասենյակ) բյուջեի հավասարակշռությունն ապահովելու համար սկզբունքորեն
բավարար եկամուտ կերաշխավորի,

քանի որ, այնուամենայնիվ, Գրասենյակի գործունեության սկզբնական փուլում
հավասարակշռության կարելի է հասնել միայն Եվրոպական համայնքների
ընդհանուր բյուջեից, Կանոնակարգի հոդված 134«3»-ին համապատասխան,
սուբսիդիա տրամադրելու դեպքում,

քանի որ Համայնքի ապրանքային նշանի հայտի համար նախատեսված բազային
տուրքը պետք է ներառի այն գումարը, որը Գրասենյակը պետք է վճարի անդամ
պետությունների արդյունաբերական սեփականության կենտրոնական
գրասենյակներից յուրաքանչյուրին՝ դրանց կողմից Կանոնակարգի հոդված 39 «4»-ի

¹ ՊՏ, թիվ L 349, 31.12.1994թ., էջ. 83:

² ՊՏ, թիվ L 11, 14.01.1994թ., էջ. 1:

³ Տես այս Պաշտոնական տեղեկագրի 1-ին էջը:

համաձայն տրամադրված որոնման վերաբերյալ յուրաքանչյուր հաշվետվության համար,

քանի որ անհրաժեշտ ճկունությունն ապահովելու համար Գրասենյակի ղեկավարը (այսուհետ՝ Ղեկավար) պետք է, որոշակի պայմանների պահպանմամբ, լիազորված լինի սահմանելու Գրասենյակի մատուցած ծառայությունների դիմաց մուծման ենթակա վճարները, ինչպես նաև Գրասենյակի տվյալների բազա մուտք ունենալու համար և այդ տվյալների բազայի պարունակությունը մեքենայաընթեռնելի ձևով մատչելի դարձնելու համար կատարվող վճարները, ինչպես նաև դրա հրատարակումների վաճառքի համար գանձվող վճարները, քանի որ տուրքերի և վճարների գանձումը հեշտացնելու համար Ղեկավարը պետք է իրավունք ունենա, ի լրումն սույն Կանոնակարգով ուղղակիորեն նախատեսված վճարման եղանակների, թույլատրելու վճարման այլ եղանակներ,

քանի որ նպատակահարմար է, որ Գրասենյակին մուծվող տուրքերը և վճարներն ամրագրվեն նույն արժույթով, ինչով որ Գրասենյակի բյուջեն,

քանի որ Գրասենյակի բյուջեն ամրագրվում է ԵԱՄ–ով,

քանի որ, ավելին, այդ գումարը ԵԱՄ–ով ամրագրելն օգնում է խուսափել փոխարժեքի փոփոխությունների հետևանքով առաջացող անհամապատասխանություններից,

քանի որ կանխիկ դրամով վճարումները պետք է կատարվեն այն անդամ պետության արժույթով, որտեղ Գրասենյակի նստավայրն է,

քանի որ սույն Կանոնակարգով նախատեսված միջոցները համապատասխանում են Կանոնակարգի 141–րդ հոդվածով սահմանված Կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Ընդհանուր դրույթներ

Սույն Կանոնակարգին համապատասխան գանձվում են՝

ա) Գրասենյակին վճարվելիք տուրքերը, ինչպես նախատեսված է Կանոնակարգով և թիվ 2868/95 կանոնակարգով (ԵՀ).

բ) Ղեկավարի կողմից հոդված 3 «1»–ի և «2»–ի համաձայն սահմանված վճարները:

Հոդված 2

Կանոնակարգով և թիվ 2868/95 կանոնակարգով (ԵՀ) նախատեսված տուրքերը Հոդված 1 «ա»-ի համաձայն Գրասենյակին վճարվելիք տուրքերը հետևյալն են՝ ԱՂՅՈՒՍԱԿ (տես. թիվ 781/2004, 1042/2005 և 1687/2005 կանոնակարգերը)

Հոդված 3

Ղեկավարի կողմից սահմանված վճարները

1. Ղեկավարը սահմանում է 2-րդ հոդվածում նշված ծառայություններից բացի՝ Գրասենյակի մատուցած այլ ծառայությունների դիմաց գանձվող գումարները:
2. Ղեկավարը սահմանում է Համայնքի ապրանքային նշանների տեղեկագրի և Գրասենյակի պաշտոնական տեղեկագրի, ինչպես նաև Գրասենյակի այլ հրատարակումների համար գանձվող գումարը:
3. Վճարների չափը սահմանվում է ԵԱՄ-ով:
4. Ղեկավարի կողմից 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն սահմանված վճարների չափը հրապարակվում է Գրասենյակի պաշտոնական տեղեկագրում:

Հոդված 4

Տուրքերի և վճարների մուծման ժամկետը

1. Եթե տուրքերի և վճարների մուծման ժամկետը սահմանված չէ Կանոնակարգով կամ թիվ 2868/95 կանոնակարգով, ապա դրանց մուծման ժամկետը այն ծառայության վերաբերյալ դիմումն ստանալու օրն է, որի համար գանձվում է տուրքը կամ վճարը:
2. Ղեկավարը կարող է որոշել՝ 1-ին պարբերությունում նշված ծառայությունների մատուցումը կախման մեջ չդնել համապատասխան տուրքերի կամ վճարների կանխավճարից:

Հոդված 5

Տուրքերի և վճարների մուծումը

1. Գրասենյակին տուրքերը և վճարները մուծվում են՝
 - ա) Գրասենյակի բանկային հաշվին կատարված վճարումով կամ փոխանցումով.
 - բ) Գրասենյակին վճարման համար հաստատված չեկերի առաքումով կամ փոխանցումով, կամ
 - գ) կանխիկ դրամով:

2. Ղեկավարը կարող է թույլատրել 1-ին պարբերությամբ սահմանված եղանակներից բացի վճարման այլ եղանակներ ևս՝ մասնավորապես Գրասենյակի ընթացիկ հաշիվներում դեպոզիտների միջոցով:

3. 2-րդ պարբերության համաձայն կայացված որոշումները հրապարակվում են Գրասենյակի պաշտոնական տեղեկագրում:

Հոդված 6

Արժույթները

1. Հոդված 5«1»«ա»-ում նշված բանկային հաշվին կատարված վճարումները կամ փոխանցումները, հոդված 5«1»«բ»-ում նշված չեկերի առաքումները կամ փոխանցումները կամ էլ հոդված 5«2»-ի համաձայն Ղեկավարի կողմից թույլատրված որևէ այլ եղանակով վճարումները կատարվում են ԵԱՄ-ով:

2. Հոդված 5«1»«գ»-ում նշված կանխիկ դրամով վճարումները կատարվում են այն անդամ պետության արժույթով, որտեղ Գրասենյակի նստավայրն է: Գործող փոխարժեքի հիման վրա Ղեկավարը սահմանում է ԵԱՄ-ին համարժեք՝ այդ արժույթով արտահայտված գումարները, որոնք ամեն օր ամրագրվում են Հանձնաժողովի կողմից և Խորհրդի թիվ 3320/94 հրահանգին (ԵՀ)⁴ (4) համապատասխան հրապարակվում են Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում:

Հոդված 7

Վճարմանը վերաբերող մանրամասները

1. Յուրաքանչյուր վճարման մեջ պետք է նշված լինի վճարումը կատարող անձի անունը, և այն պետք է պարունակի այն անհրաժեշտ տեղեկատվությունը, որը Գրասենյակին վճարման նպատակը անմիջապես սահմանելու հնարավորություն կտա: Պետք է, մասնավորապես, տրամադրվեն հետևյալ տեղեկությունները՝

ա) եթե վճարվում է հայտ ներկայացնելու համար տուրքը, ապա վճարման նպատակը, այն է՝ «հայտ ներկայացնելու համար տուրք»:

բ) եթե վճարվում է գրանցման համար տուրքը, ապա հայտի հերթական համարը, որը գրանցման հիմքն է և վճարման նպատակը, այն է՝ «գրանցման համար տուրք»: գ) եթե վճարվում է առարկության համար տուրքը, ապա հայտի համարը և Համայնքի այն ապրանքային նշանի հայտատուի անունը, որի դեմ առարկություն է ներկայացվում, ինչպես նաև վճարման նպատակը, այն է՝ «առարկության համար տուրք»:

զ) եթե վճարվում է չեղյալ հայտարարելու կամ անվավեր ճանաչելու համար տուրքը, ապա Համայնքի այն ապրանքային նշանի սեփականատիրոջ անունը և գրանցման

⁴ ՊՏ, թիվ L 350, 31.12.1994թ., էջ. 27:

համարը, որի դեմ ուղղված է դիմումը, ինչպես նաև վճարման նպատակը, այն է՝ «չեղյալ հայտարարելու համար տուրք» կամ «անվավեր ճանաչելու համար տուրք»:

2. Եթե վճարման նպատակը հնարավոր չէ անմիջապես որոշել, Գրասենյակը վճարում կատարող անձից պահանջում է իր կողմից սահմանված ժամկետում գրավոր ծանուցել այդ նպատակի մասին: Եթե վճարում կատարող անձն այդ պահանջը սահմանված ժամկետում չի կատարում, վճարումը համարվում է չկատարված: Վճարված գումարը հետ է վերադարձվում:

Հոդված 8

Վճարման թվականը համարվող թվականը

1. Գրասենյակին որևէ վճարում համարվում է կատարված՝

ա) այն օրը, երբ վճարվող կամ փոխանցվող գումարը փաստացի մուտքագրվում է Գրասենյակի բանկային հաշվին՝ հոդված 5«1»«ա»-ում նշված դեպքերում.

բ) Գրասենյակի կողմից չեկի ստացման օրը՝ պայմանով, որ չեկը վճարված է՝ հոդված 5«1»«բ»-ում նշված դեպքում.

գ) Գրասենյակի կողմից կանխիկ դրամով վճարման գումարի ստացման օրը՝ հոդված 5«1»«գ»-ում նշված դեպքերում:

2. Այն դեպքերում, երբ Ղեկավարը, հոդված 5 «2»-ի դրույթների համաձայն, թույլատրում է հոդված 5«1»-ով սահմանված եղանակներից բացի տուրքերի վճարման այլ եղանակներ, նա նաև սահմանում է այն օրը, երբ նման վճարումները համարվում են կատարված:

3. Եթե 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթների համաձայն տուրքի վճարումը չի համարվում կատարված մինչև վճարման ժամկետի ավարտը, համարվում է, որ ժամկետը պահպանվել է, եթե Գրասենյակին ապացույց է ներկայացվում, որ անձը, որը կատարել է վճարումը՝

ա) անդամ պետությունում այն ժամկետում, որի ընթացքում պետք է կատարվեր՝

i) վճարումը կատարել է բանկային հաստատության միջոցով.

ii) բանկային հաստատությանը ժամանակին կարգադրել է փոխանցել վճարման գումարը, կամ

iii) փոստատնից կամ այլ կերպ ուղարկել է Գրասենյակի հասցեն կրող և հոդված 5«1»«բ»-ի իմաստով չեկ պարունակող նամակ՝ պայմանով, որ չեկը վճարված լինի:

և

բ) հավելավճար է վճարել համապատասխան տուրքի կամ տուրքերի 10 տոկոսի չափով, սակայն առավելագույնը 200 ԵԱՄ–ի չափով. հավելավճար չի կատարվում, եթե «ա» ենթապարբերության որևէ պայման բավարարվել է ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում՝ նախքան վճարման ժամկետը լրանալը:

4. Գրասենյակը կարող է պահանջել, որ վճարումը կատարած անձն ապացույց ներկայացնի այն օրվա կապակցությամբ, երբ պարբերություն 3«ա»–ում սահմանված պայմանը բավարարվել է և, եթե պահանջվում է, իր կողմից սահմանված ժամկետում վճարի պարբերություն 3«բ»–ում նշված հավելավճարը: Եթե անձը չի կատարում այդ պահանջը, կամ եթե ապացույցը բավարար չէ, կամ եթե պահանջվող հավելավճարը չի վճարվում սահմանված ժամկետում, վճարման ժամկետը համարվում է չպահպանված:

Հոդված 9

Վճարված գումարի ոչ բավարար լինելը

1. Վճարման ժամկետը համարվում է սկզբունքորեն պահպանված, միայն եթե տուրքի ամբողջ գումարը վճարվել է ժամանակին: Եթե տուրքն ամբողջովին չի վճարվում, վճարված գումարը վերադարձվում է վճարման ժամկետի ավարտից հետո:

2. Այնուամենայնիվ, Գրասենյակը կարող է, այնքանով, որքանով դա հնարավոր է մինչև ժամկետի ավարտը մնացած ժամանակահատվածում, վճարում կատարող անձին հնարավորություն տալ վճարելու գումարի մնացած մասը կամ, արդարացված դեպքերում, ներել չվճարված փոքր գումարները՝ չսահմանափակելով վճարում կատարող անձի իրավունքները:

Հոդված 10

Աննշան գումարները վերադարձնելը

1. Տուրքերից կամ վճարներից ավելի մուծված գումարը չի վերադարձվում, եթե այն աննշան է և շահագրգիռ կողմն ուղղակիորեն չի պահանջել վերադարձնել այն: Գրասենյակի ղեկավարն է որոշում, թե որն է համարվում աննշան գումար:

2. 1–ին պարբերության համաձայն Ղեկավարի կայացրած որոշումները հրապարակվում են Գրասենյակի պաշտոնական տեղեկագրում:

Հոդված 11

Ուժի մեջ մտնելը

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում՝ դրա հրապարակումից հետո յոթերորդ օրը:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անդամ պետությունների համար և դրանցում գործում է անմիջականորեն:

Կատարված է Բրյուսելում, 1995 թվականի դեկտեմբերի 13-ին:

Հանձնաժողովի կողմից՝

ՄԱՐԻՈ ՄՈՆՏԻ

Հանձնաժողովի անդամ